

ՀԱՅԿԱԿԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻՒՆ

∞

Դրամ
Վրուկ Ալպոյանի
Պահիրէ — Մրասու

ՈՒՂԵՑՈՅՑ

ԿՏԱԿԻ ԵՒ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒՔԵԱՆ

~~~

ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿԻ

ԿՏԱԿԱՅԻՆ ՅՈՒՇԱԳԻՐՔ


1906 – 1946

ՆԻԻ ԵՌՈՒԲ

1947



1835



493

ՀԱՅԿԱԿԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻՒՆ

2

ՈՒՂԵՑՈՅՑ  
ԿՏԱԿԻ ԵՒ ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԵԱՆ

Միւս  
202

ՔԱՐԱՍՆԱՄԵԱԿԻ  
ԿՏԱԿԱՅԻՆ ՅՈՒՇԱԳԻՐՔ

1906 - 1946



ՆԻԽ ԵԱՐՔ

1947



## Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Հ. Բ. Ը. Միութեան հաւատաւոր մէկ անդամը,  
Տոֆք. Կարօ Պիւլպիւլ, գեղեցիկ գաղափարը ունեցած  
է որ Կոտակներու եւ Նուիրատուութիւններու մասին  
գրքոյի մը հրատարակուի, եւ իր մտածումը գործնա-  
կանացնելու համար ստանձնած է այդ հրատարակու-  
թեան ծախքը, յանձնելով 500 տոլար:

Արդարեւ, Միութեան վստահուած բազմաթիւ  
Հիմնադրամներուն պատկերը ա'յնքան թելադրական  
է, որ կ'արժէր ամփոփ տեղեկութիւններու լոյսին տակ  
ներշնչել եւ առաջնորդել այն ամէն ազգասէր հայրե-  
նակիցները որ բարի մտածում մը ունին Ազգին եւ Հայ  
թենիքին համար:

Սիրայօժար ստանձնեցի այդ աշխատանքը եւ ու-  
րախ եմ որ ինծի վիճակուեցաւ Հ. Բ. Ը. Միութեան  
անդամներուն եւ բարեկամներուն ներկայացնել այս  
գրքոյիը, որուն յղացման եւ իրականացման պատիւը  
կ'երթայ մեր բարեկամ Տոֆք. Կարօ Պիւլպիւլի:

ՎԱՐԻՉ-ՊԱՏՈՒԻՐԱԿ

Նիւ Եռք, Փետրվար 1947

Վ. ՄԱԼԵԶԵԱՆ



## ԱՆՄԱՀՈՒԹԵԱՆ ՃԱՄԲԱՆ

Հայոց ազգային մեծագոյն հաստատութիւնները հիմնուած են մարդասէր եւ ազգասէր Հայերու նուիրատութիւններով եւ կտակներով։

Պոլսի Ազգ. Հիւանդանոցը եւ Կեղրոնական Վարժարանը, Կարինի Սանասարեան Վարժարանը, Վենետիկի Մխիթարեան Հայրերու Մուրատ-Ռափայէլեան Վարժարանը, Լազարեան, Գէորգեան Ճեմարանները, Տփղիսի Ներսէսեան Վարժարանը, ուրիշ շատ մը կրօնական եւ կրթական հաստատութեանց հետ, փառաւոր ապացոյցներ են՝ թէ հայ ժողովուրդին զաւակները ազդը պահպանած, ապրեցուցած եւ զօրացուցած են ազդապահպան բարեգործութեամբ եւ քրիստոնէական գաղափարապաշտութեամբ։

Մեր պատմութեան մէջ, եղրայրսիրութեան գործնական արտայայտութեան յորդահոս ակին, Մեծն Ներսէս Պարթեւի պէտք է երթանք, ազգային բարեգործութեան հզօր ներշնչման համար։ Անիկա մեզի թողած է մարդասիրական աւանդութեան մը գեղեցիկ ժուանդութիւնը։ Անկէ ի վեր, մեծանուն Ամիրաներու շինարարութեան ժառանգորդները շարունակած են դրական եւ տոհմաշէն ազգասիրութեան նուիրագործուած աւանդութիւնը։ Այսօր ալ, հակառակ յաւէտ կործանարար սղէտներու, Հայաստանի եւ Մերձաւոր

Արեւելքի մէջ կը կանգնին աղգային բարեգործութեան եւ իմացական լուսաւորութեան կոթողացած հիմնարկութիւններ, որ, 1906-էն սկսեալ, իրենց ծնունդն ունեցան Հ. Բ. Լ. Միութեան հիմնադիրներուն եւ անոնց հայրենասէր յաջորդներուն աղգային խտէալներուն եւ բաղձանքներուն մէջ:

Բազմաթիւ հիմնարկութիւններ, հաստատուած կտակներով եւ նուիրատուութիւններով, ճոխացուցին Հայկական Բարեգործական Միութեան նիւթական եւ բարոյական ժառանգութիւնը, եւ այսօր մենք արդար հպարտութիւն մը կը զգանք որ ունինք Նուպարաշէնը, Դարուհի Յակոբեան Մայրանոցը, Մարի Նուպար Ակնարուժարանը, Բարեգործականի Տունը, Խորհ. Հայստանի մէջ, Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը՝ Նիկոսիա, եւ այլ հիմնարկութիւններ Մերձ. Արեւելքի մէջ:

Կտակներ եւ նուիրատուութիւններ, մեծ ու փոքր, բոլորն ալ կը բղխին այն մեծ հաւատքէն եւ համոզումէն՝ թէ հայ աղգը արժանի է ապրելու, որովհետեւ օժտուած եւ տաղանդաւոր աղգ մըն է ան: Կտակ ընել՝ աղգային հեռատեսութիւն ունենալ է, հաւատքն ունենալ է՝ հայ ժողովուրդին աղգային ճակատագրին մասին: Ցեղին հայկական դրոշմը պահպանել եւ յաւերժացնել, հոգեկան եւ իմացական մշակոյթի դարաւոր լոյսը՝ Լուսաւորչայ կանթեղով աշխարհի մէջ վառ պահել է: Այս ճշմարտութիւնը խորապէս ըմբռնած ըլ-

լալուն համար էր, որ Բրիտանիոյ անմահ վարչապետը  
կլատսթօն ըստ թէ «Հայաստանի ծառայել՝ Քաղա-  
քակալիթութեան ծառայել է»:

Աղդաշինութիւն, դաստիարակութիւն եւ բարե-  
գործութիւն՝ Հ. Բ. Ը. Միութեան երեք սրբազան ա-  
ռաքելութիւններն են հայ ժողովուրդին մէջ։ Երեք  
առաքելութիւններն ալ իրենց նուիրուած առաքեալ-  
ներն ունեցան յանձին բազմաթիւ կտակակատարներու  
եւ նուիրատուներու։ Սակայն ո՛րքան հարուստ ու ճոխ  
եղած պիտի ըլլար Հայութեան կեանքը, եթէ ամէն  
Հայ, հեռատեսութեամբ եւ գիտակցութեամբ, իր  
հարստութիւնը կամ անոր մէկ մասը յատկացնէր մըշ-  
տընթենական յիշատակ մը ձգելու, ազգին տեւական  
բարիք մը ընելու։ Այսօր ալ Հ. Բ. Ը. Միութիւնը ա-  
մէն Հայու պատեհութիւն կուտայ որ մեծ կամ հա-  
մեստ կտակով մը եւ մանաւանդ անմիջական նուիրա-  
տութեամբ մը բարիք ընէ հայ ժողովուրդին։ Շա-  
տեր կան, նոյնիսկ անդաւակ կամ ամուրի, որ կրնան ի  
նպաստ վերածնեալ Հայաստանի կատարել բարեգոր-  
ծութիւն մը որ յաւերժացնէ իրենց անունը եւ շահեցնէ  
անմահութիւն մը, ինչպէս շահեցան Հայ անզուգական  
բարերարները Պօղոս Նուպար եւ Կարապետ Մելգոն-  
եան։

Սակայն, ափսո՞ս, ոմանք դրամին կառչած կը  
մնան, գիտնալով հանդերձ որ չեն կրնար անիկա իրենց

Հետ գերեզմանէն անդին տանիլ։ Մեր սիրտերը աւելի  
կը ցաւին, երբ ատեն ատեն կը լսենք Հայերու մասին՝  
որ օտար Մարմիններու կը ձգեն իրենց հարստութիւնը,  
մոռնալով իրենց ազգը որ իրենց ծնունդ տուեր է, որ  
պէտք ունի իր բախտաւոր զաւակներուն օժանդակու-  
թեան։

Մենք մեր խօսքը կրնանք ուղղել միայն ճշմարիտ  
ազգասէրներու եւ կ'ըսենք թէ երբ կտակ մը կամ կա-  
րեւոր նուիրատուութիւն մը կ'ընէք Հ. Բ. Լ. Միու-  
թեան, ազգային նպատակի մը համար, ճշմարիտ հայ-  
րենասիրութեան անխորտակելի կոթող մը կը կանգ-  
նէք։

Զեր անունը ձեր ձեռքովն իսկ կ'արձանագրէք Ան-  
մահութեան Յուշարձանին վրայ։



## ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ՄԸ

Նախաշրջանին, 1906–1924, Հ. Բ. Բ. Միութիւնը հիմնուած ըլլալով՝ Եղիպտոսի մէջ, թէեւ ազատօրէն կը գործէր, բայց այդ երկրին օրէնքները բարենպատակ ընկերակցութեանց համար իրաւակարգ մը հաստած չըլլալուն, բացի Վաքֆի հիմնարկութենէն եւ կրօնական խմբակցութիւններէն, անիկա իր անունին ոչ կտակ եւ ոչ ալ կալուած կրնար ընդունիլ, բնականաբար եւ չէր կրնար դատարանի առջեւ ներկայանալ, չունենալով իրաւական անձնաւորութիւն։ Այդ պատճառով, Միութեան կալուածները կ'արձանագրուէին իր ցկեանս՝ Նախագահին՝ Պողոս Նուպար Փաշայի անունով, ինչ որ անպատեհութիւններ ունէր։ Այդ անբաղձալի դրութեան առաջքը միանգամ ընդ միշտ առնելու կանխահոգութեամբ էր որ, հարցին օրինական եւ թէ միջազգային տեսակէտով քննութենէն վերջ, նպատակայարմար դատուեցաւ, 1924-ին, Հ. Բ. Բ. Միութիւնը վերածել Զուիցերիական Ընկերակցութեան մը եւ իբր այդ արձանագրել Լօզանի մէջ, որպէս իր «հիմնական կեղրոնատեղին»։

Ըստ այնմ, այլեւս ալահովուած ըլլալով՝ Միութեան օրինական անձնաւորութիւնը՝ ընկերակցաբար, Զուիցերիոյ Քաղաքային Օրինագրքին 60-79րդ. Յօդուածներու տրամադրութեանց համաձայն, այդ թուա-

կանէն ասդին, օգտուելով մանաւանդ կտակներու եւ առ  
հասարակ բարեգործական հիմնադրամներու եւ հիմ-  
նարկութիւններու մասին Զուիցերիական օրէնքին  
թոյլատու եւ բարեացակամ տրամադրութիւններէն,  
Հ. Բ. Ը. Միութիւնը շատ դիւրաւ կրցաւ արձանագրել  
բազմաթիւ նոյն խոկ կտակաձեւ նուիրատուութիւններ,  
ի կենդանութեան: Ասոնք ուղղակի եւ անմիջապէս ի-  
րականացած, եւ օրինականացած՝ նօտարական աքդե-  
րով, զերծ են այն բարդ ձեւակերպութիւններէն եւ  
ծանր տուրքերէն որ ուրիշ երկիրներու մէջ զոյութիւն  
ունին:

W

---

**ԿՏԱԿՆԻԳ ԸՐԵԲ, ԱՅՍՈՐ, ԵՒ ԱԶ ԹԵ ՎԱՂԵ**

---

## ԿՏԱԿԱՅԻՆ ՈՒԽՏ

Միութեան Հիմնադիր-Վարիչները, համոզուած  
ըլլալով որ կտակներուն եւ նուիրատուութեանց պայ-  
մաններուն խղճամիտ գործադրութիւնը, այսինքն  
կտակարարներուն եւ նուիրատուներուն կամքը խղճ-  
մրտօրէն յարգելու բժախնդիր հաւատարմութիւնը  
միայն կրնայ երաշխաւորել այդպիսի Հիմնադրամնե-  
րու գոյացումը եւ բազմապատկումը, ներշնչելով այն  
բացարձակ վստահութիւնը՝ որ իսկապէս Հ. Բ. Է.  
Միութեան բարոյական մեծագոյն դրամագլուխը ե-  
ղածէ, առաջին օրէն իսկ այդ մասին ստորագրած են  
Երդմնագիր մը, պարտք դնելով իրենց յաջորդներուն  
վրայ կրկնել այդ ուխտը:

Իրողութիւն է որ Կեդր. Վարչ. Ժողովը երբեք չէ  
չեղած այդ բանաւոր ուղղութենէն եւ միշտ կտակը  
նկատած է նուիրական, հակառակ ամէն քննադատու-  
թեանց եւ ճնշումներու, որ պարբերաբար երբեմն  
կ'ուղղուին իր սոյն անշեղ հաւատարմութեան դէմ:  
Արդարեւ, իր ըմբռնումով, այդ խղճի պարտականու-  
թիւնը կատարելով, ոչ չէ միայն կը յարգէ մանաւանդ  
օրէնքը որ խստիւ կը պաշտպանէ կտակին նուիրակա-  
նութիւնը, այլ եւ առաջքը կ'առնէ այն բոլոր անպա-  
տեհութեանց եւ մինչեւ իսկ շեղումներուն եւ զեղծում-  
ներուն որ մեր ազգը զրկած են շատ մը կարեւոր կտա-  
կադրամներէ . . . :

## ԵՐԴՄՆԱԳԻՐ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Այս տոմարին մէջ օրը օրին եւ թուականի կարգով պիտի արձանագրուին Հ. Բ. Ը. Միութեան կտակներուն, ինչպէս եւ մասնաւոր նպատակի համար եղած նուիրատուութեանց վերաբերեալ բոլոր վաւերաբուղթերը եւ այդ մասին փոխանակուած կարեւոր գրութիւնները:

Միութեան անդրանիկ Կեդր. Վարչ. Ժողովը, ներկայ յայտարարութիւնը կտակներու եւ Նուիրատուութեանց տոմարին գլուխը դնելով, կ'երդնու կէտ տռ կէտ եւ կատարեալ խղնմտութեամբ գործադրել կտակարարներուն եւ նուիրատուներուն կամքն ու բացայտ տրամադրութիւնները, կը խոստանայ ոչ մէկ գինով քոյլ տալ որ ոեւէ կամայական շեղում մը ըլլայ եւ կանխորշ նպատակն տարբեր ուղղութեամբ գործածուին կտակուած եւ նուիրուած գումարները, յանձն կ'առնէ մասնաւոր հոգածութեամբ մատակարարել Միութեան կողմէ պաշտօնապէս ընդունուած եւ սոյն տոմարին մէջ արձանագրուած բոլոր կտակները եւ Նուէրները, եւ այժմէն իսկ պարտք կը դնէ իր յաջորդներուն վրայ, միեւնոյն ուխտը կրկնելով իրենց պաշտօնին սկիզբը, միեւնոյն յօժարամտութեամբ եւ նախանձախնդրութեամբ գործադրել Միութեան կտակ-

Անքու եւ Նուիրատուութեանց յարակից պայմանները,  
առանց իրաւատէրին օրինական հաւանութեան անոնց-  
մէ ստորակէտ մը իսկ չի փոխելով։

### Դ Ի Ւ Ա Ն

Պօղոս Նուպար Փաշա, Ատենապետ  
Եսպուպ Արթին Փաշա, Փոխ-Ատենապետ  
Երուանդ Աղաքօն Պէյ, Փոխ-Ատենապետ  
Վահան Մալէզեան, Ատենադպիր  
Մկրտիչ Անդրանիկեան, Գանձապետ

### Ա Ն Դ Ա Մ Ն Ե Ր

Առաքել Պէյ Նուպար  
Տ. Փիլիպպոսեան  
Կ. Շերիտնեան Պէյ  
Տ. Քէլէկեան Խան  
Գ. Սինապեան  
Լ. Կիւմիւշկերտան  
Ա. Ճէվահիրնեան

Սերովբէ Սվանեան  
Պօղոս Էսմէրեան  
Տիգրան Կամսարական  
Արայ Արապեան  
Վահէ Ֆրէնկեան  
Զարեհ Պէյ Նուպար  
Ս. Աստուածատուրօֆ

ԵԱՆ.— Երդմնագիրը կը ստորագրուի յաջորդ Վարիչներուն  
կողմէ եւս։

## ՕԴՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Մեր երկարամեայ փորձառութեան վրայ հիմնուելով, ջերմօրէն կը յանձնաբարենք որ, յետ մահու իրագործելի կտակի մը կամ ի կենդանութեան պայմանաւոր նուիրատութեան մը մասին մտադրութիւն ունեցող բարեսէր ազգայինները, իրենց փաստաբանին կամ խորհրդականին դիմելէ առաջ, ճշգրիտ տեղեկութիւններ եւ գործնական թելադրութիւններ ստանալու համար դիմեն Հ. Բ. Լ. Միութեան Կեդր. Վարչութեան, որ, ի հարկին, այդ առթիւ, կը պատրաբաէնախագիծ մը, որ կընայ հիմ ծառայել կտակաբարին կամ նուիրատուին առաջադրած ծրագրին կամ պայմանագրութեան:

Վերջին քսան տարիներու ընթացքին, Հ. Բ. Լ. Միութիւնը Ամերիկայէն դուրս արձանագրած է միայն ի կենդանութեան պայմանաւոր նուիրատութիւններ, զոր կը նուիրագործէ երկուստեք համաձայնութեամբ կնքուած մասնաւոր պայմանագրութիւն մը, նախընտրաբար Միութեանս Լոզանի նոտարին կողմէ ընդունուած եւ վաւերագրուած: Ատոնք օրինական անժխտելի հանգամանք կ'ունենան, անբեկաննելի վճռագրի մը հեղինակութեամբը:

Հ. Բ. Լ. Միութիւնը ըլլալով Զուիցերիական բարենպատակ ընկերակցութիւն մը, Զուիցերիոյ մէջ

նմանօրինակ կտակային նուիրատուութիւնները տուրքէ զերծ ըլլալու առաւելութիւնը եւս ունին:

Բնականաբար, օրինական եւ գործնական անպատեհութիւն չի ներկայացնող ոեւէ պայման ընդունելի է, բայց եւ այնպէս մասնաւորաբար կը յանձնաբարուին հետեւեալ կէտերը.-

Ա.- Լաւագոյն է, փոխան կտակի, որ մահուընէ վերջ գործադրելի է, զոր կտակարարը կրնայ փոխել կամ ջնջել մինչեւ իր մահը, եւ որ ժառանգական դատերու, տուրքերու եւ ծախքերու կրնայ տեղի տալ, նախընտրել ի կենդանութեան պայմանաւոր նուիրատուութեան ձեւը, որ ունի բազմադիմի առաւելութիւններ եւ որ ի հարկին ցմահ կ'ապահովէ նուիրատուուին ազատութիւնը, որպէս բացարձակ իրաւատէր:

Բ.- Լաւագոյն է կեդր. Վարչութեան վստահիւ յանձնուած Հիմնադրամին մատակարարութիւնը:

Գ.- Լաւագոյն է համաձայնագիրը չի խճողել կնճուտ պայմաններով, երկար պայմանաժամներով եւ բազմադիմի յատկացումներով:

Դ.- Լաւագոյն է կեդր. Վարչութեան ազատ որոշումին թողուլ զուտ եկամուտին յատկացումը, Հ. Բ. Ը. Միութեան նպատակներուն եւ ձեռնարկներուն:

Հ. Բ. Ը. Միութեան կեդր. Վարչ. Ժողովը, ոչ միայն իր ուխտին եւ երդումին հաւատարիմ մնալով, խղճմտօրէն կը գործադրէ կտակարարին կամ նուի-

բատուին կամքն ու պայմանները, ինչպէս նաև Հիմ-  
նական Կանոնագրին բացայաց տրամադրութիւննե-  
րը, այլ եւ նախնական բանակցութեանց ընթացքին  
բացարձակ գաղտնապահութեան պայմանն ալ կը յար-  
դէ եւ ի հարկին որոշ ժամանակի մը համար կտակարա-  
րին կամ նուիրատուին անունը եւս չի հրատարակեր:

## ՅՈՒՇԱՐՁԱՆ

Ի՞նչ լաւագոյն քան կտակ,  
Յաւերժական յիշատակ:  
Մարդ խորհելու է այժմէն  
Կատարել պարտեն իր ամէն:

Տուրք մըն է աս կամաւր,  
Զոր խղճի տէր Հայն այսօր  
Ազգին հանդէպ կը պարտի,  
Գուրգուրանքովն իր սրտի:

Մարդն իմաստուն չի սպասեր  
Որ ազգին ցոյց տայ իր սէր,  
Այլ իր կտակն ատենին  
Արդէն կ'ընէ հոգեւին:

Վաղը ամէն ինչ հողին  
Կ'ըլլայ բաժինը յետին,  
Բայց կտակով յուշարձան  
Կ'ըլլայ անունն յաւիտեան:


Վ. Մ.

## ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹԻՒՆ ԵՒ ԹՐԸՍԹ

Ինչպէս յայտնի է, մահմետական երկիրներու մէջ վաֆֆի, իսկ անգլիական եւ ամերիկեան երկիրներու մէջ Թրըսթի դրութեան շնորհիւ, նոյն իսկ զաւակ կամ ուրիշ ժառանգորդներ ունեցող հարուստներ, ինչ ինչ անձնական նկատումներով, իրենց ողջուքեանը կը կարգադրեն իրենց հարստուքեան ապագան: Այդ կանխահոգ կարգադրուքեան շնորհիւ ցոյց կը տրուի զայն մշտապէս եւ կամ առժամապէս ապահովուքեան տակ առնելու հեռատեսուքեան ոգի մը, բանզի շատ մը ընտանիքի հայրեր բախտին ճգել չեն ուզեր ինչ որ իրենց քրտնազան աշխատանիքը կրցած են համբարել:

Այսօր կտակարար մը կամ նուիրատու մը կրնայ պայման դնել Միուքեան՝ որ իր Հիմնադրամը անձեռնմխելի պահուի կամ եւս Թրըսթի վերածուի մշտնջենապէս կամ առժամապէս, ինչպէս որ նախամեծար կը սեպէ: Բայց կրնայ նաեւ պայման դնել որ անձեռնմխելի չըլլայ իր Հիմնադրամը, այլ տրամադրելի ըլլայ: Այդ պարագային, որպէս նպաստադրամ կը յատկացուի այն նպատակին կամ ձեռնարկին զոր կտակարար կամ նուիրատուն կանխորոշած է, կամ, հակառակ պարագային, Կեդր. Ժողովը յարմար կը դատէ սահմանել:

Արդէն պէտք չէ կարծել որ Միուքեան վստահուած բոլոր Հիմնադրամները անմիջապէս եւ ամբողջովին օգտագործելի են՝ նախատեսուած այս կամ այն ձեռնարկին համար, որովհետեւ ընդհանիրապէս ումանիք վերապահումներ կ'ընեն, այսինքն ցմահ



իրենք կըստանան եկամուտը, կամ ամեատմերու յատկացումներ կը նախասահմանեն, կամ ուրիշ որոշ պայմաններ եւ պայմանաժամներ կը նշանակեն։ Այնպէս որ կտակարարներուն եւ նուիրատումներուն կողմէ նախապէս կենսաբաշակի, ժամանակամիջոցի եւ յատկացումի նման պարտադրուած որոշ յանձնառութիւնները յարգելէ վերջ միայն՝ Հ. Բ. Ը. Միութիւնը կրմայ Հիմնադրամին ազգային նպատակը գործադրել։

Միութեան անձեռնմխելի Դրամագլուխները մեծ մասամբ Թրըսթի վերածուած են։

Այդ Թրըսթները հաստատուած են հետեւեալ առաջնակարգ Դրամատումներուն մէջ. — Լոնսոն, WESTMINSTER BANK LTD., MIDLAND BANK EXECUTIVE & TRUSTEE CO. LTD., BARCLAY'S BANK LTD., եւ Նիւ Եորֆ, NATIONAL CITY BANK OF NEW YORK (CITY FARMERS TRUST BANK)։

## ԳԱՆԻ ՏԵՍԱԿ ԿՏԱԿ ԵՒ ՆՌԻՒՐԱՏՈՒԹԻՒՆ Կ'ԸԼԼԱՑ

Հ. Բ. Հ. Միութեան հասոյթներուն ամէնէն դլխաւոր եւ էական մասը կը կազմեն կտակները եւ նուիրատուութիւնները՝ որոնց մասին Հիմն. կանոնագիրը ունի մասնայատուկ տրամադրութիւններ (10րդ. Յօդուած) :

Ասոնք երկու տեսակ են՝ անձեռնմխելի եւ տրամադրելի, կամ եւս չորս մասի կը բաժնուին .—

Ալաջին .— այն կտակները եւ նուիրատուութիւնները՝ որոնց մայր-գումարը անձեռնմխելի է եւ եկամուտները միայն կանխորոշ նպատակներուն կը յատկացուին, այնուհետեւ կեղը. Վարչ. Ժողովը պարտաւոր է կէտ առ կէտ յարդել կտակարարներուն եւ նուիրատուններուն կամքը, առանց իրենց նախասահմանած նպատակէն շեղելու: Ասոնք մաս կը կազմեն Միութեան անձեռնմխելի Մասնաւոր Դրամագլուխին :

Երկրորդ .— այն կտակները եւ նուիրատուութիւնները՝ որ տրամադրելի են, այսինքն սալառելի են, եւ այն պայմանով եղած են որ մայր-գումարն իսկ գործածուի կանխորոշ նպատակի մը, որով՝ նոյնպէս՝ կեղը. Ժողովը պարտի յարդել կտակարարներուն եւ նուիրատուններուն կամքը եւ անոնց որոշած նպատակին յատկացնել գումարը, անմիջապէս որ հնարաւոր է՝ երբ ժամանակամիջոց մը չէ սահմանուած:

Երրորդ .— այն կտակները եւ նուիրատուութիւնները՝ որոնց մայր-գումարին կամ եկամուտին մասին կտակարարները կամ

նուիրատուները ոեւէ յատկացում կամ սահմանափակում չեն ըրած, բայց պայման դրած են որ Միութիւնը կարդ մը բացարձակ պարտաւորութիւններ ստանձնէ : Ասոնք «Պարտադիր» Հիմնադրամներ» են, որ վրենց էութեամբը ավելի Հիմնական Դրամագլուխին մաս կը կազմեն, իրեւ Միութեան սեփական գոյքը, բայց, յայտորոշելու համար Մասնաւոր եւ Հիմնական Դրամագլուխն, կ'արձանագրուխն որպէս Սովորական Դրամագլուխն : Այս բացառիկ դասակարդին կը սլատկանի միայն Մելգոնեան հոյակապ նուիրատուութիւնը :

**Գորրորդ.**— այն կտակները եւ նուիրատուութիւնները որ Միութեան տրամադրուած են առանց ոեւէ պայմանի, այսինքն անորոշ նպատակով, եւ զոր կեղը . Վարչ . Ժողովը ամբողջովին Հիմն . Դրամագլուխին վրայ կը բարդէ եւ կամ իրեւ անմիջական նպաստ իր յարմար դատած ձեռնարկին կամ նպատակին կը յատկացնէ :

Անձեռնմխելիութեան սլայմանով եղած կտակներուն եւ նուիրատուութեանց Հիմնադրամները մեծ մասամբ թրըսթ եղած են, 1926-ին եւ 1928-ին :

Միութեան քոլոր Հիմնադիրներուն լիակատար ցուցակը կը գրուի այս գրքոյկին վերջը :

## ՊԱՅՄԱՆԱԿՈՐ ՆՌԻՒՐԱՏՌՈՒԹԻՒՆ

### Ի ԿԵՆԴԱՆՈՒԹԵԱՆ

Այսօր իրողութիւն է որ, շնորհիւ իր լուրջ կազմակերպութեան, որ դրուած է օրինական եւ վարչական հաստատուն հիմերու վրայ, շնորհիւ այն վստահութեան զոր իր հիմնադիրները եւ ղեկավարները ներշընչած են, շնորհիւ այն բաղմազան կտակներուն եւ նուիրատութեանց որ նախընտրաբար եւ շարունակաբար իրեն կ'ըլլան, Հայկական Բարեգործ. Ընդհ. Միութիւնը եղած է, առաւելապէս, ազգային դրամատուն մը, համազդային հիմնարկութիւն մը, ուր հետզհետէ կարեւոր Հիմնադրամներ կը կուտակուին, իր հետապնդած Ազգապահպանումի եւ Հայրենաշինութեան բարձր նպատակներուն համար, միեւնոյն ատեն ապահովելով Միութեան մշտատեւ զոյութիւնը եւ արդիւնաւէտ դործունէութիւնը՝ յօգուտ Ազգին եւ Հայրենիքին:

Ասոնք, ըստ Հիմն. Կանոնադրի, Երեք տեսակ Դրամագլուխի կը պատկանին, իրենց էութեան համաձայն. —

Առաջին, Հիմնական Դրամագլուխ, որ գլխաւրաբար կը բաղկանայ մուտքի տուրքերէն եւ անդամավճարներու 1/6էն:

Երկրորդ, Սովորական Դրամագլուխ, որ կը կազ-

մըւի այն Հիմնադրամներէն որոնց մայր-գումարն ու եկամուտը բոլորովին Միութեան կը թողուին, պարտադիր որոշ յանձնառութեանց փոխարէն (բացառապէս՝ միայն Մելգոնեան աննախընթաց նուիրատուութիւնը մաս կը կազմէ այս Դրմագլուխին) :

Երրորդ, Մասնաւոր Դրամագլուխ, որուն մաս կը կազմեն այն ամէն կտակները եւ նուիրատուութիւնները, որոնց եկամուտները միայն կը յատկացուին պայմանադրուած կանխորոշ նպատակներուն:

Վերոգրեալ երեք Դրամագլուխները անձեռնմխելի են, եւ մեծ մասամբ թրըսթի վերածուած են:

Հ. Բ. Ը. Միութիւնը իր ենթարկուած երկրին օրէնքներուն տրամադրութեանց համաձայն, ի վիճակի է ընդունելու ամէն տեսակ Հիմնադրամ, նուիրատուին կենդանութեանը, իրեն համար նպաստաւոր պայմաններով եւ դրական երաշխիքներով:

Լստ այնմ, ոեւէ ազգասէր Հայ, փոխանակ յետ մահու կտակ մը ընելու, որ ընդհանրապէս դուռ կը բանայ այլազան կնճիռներու, ժառանգական դատերու, անակնկալ ծախքերու եւ ծանր տուրքերու, վերոգրեալ բացատրութեանց լոյսին տակ անկասկած լաւագոյն պիտի սեպէ իր կենդանութեանը միջոցին Միութեան ընել պայմանաւոր նուիրատուութիւն մը, ի հարկին պահելով իր կատարեալ ազատութիւնը: Արդարեւ, իր Հիմնադրամը անձամբ մատակարարելու, եկամուտները ինք գանձելու եւ ուղածին ալէս ծախսելու, եւ

Նոյն իսկ մայր-զումարը մեծ մասամբ իր անձնական պէտքերուն գործածելու մասին կրնայ ձեռք բերել օրինական ամէն տեսակ երաշխաւորութիւններ, վճռական յանձնառութեանց շնորհիւ:

Այս պայմաններուն մէջ, մասնաւորաբար անժառանգ կամ անզաւակ Հայերուն կ'ընծայուի թանկագին պատեհութիւն մը, քանի որ այժմէն իսկ կրնան գործնական կարգադրութիւններ ընել, առանց անտեսելու իրենց սեփական իրաւունքները կամ զրկանք ընելու իրենց նախասիրած անձին կամ անձերուն։ Միեւնոյն ատեն, իրականին մէջ, դիւրին բարեգործութիւն մը կ'ընեն այն Հայերը որ պիտի չուղէին իրենց հարստութիւնը ամբողջովին Հ. Բ. Ը. Վիութեան նուիրել։ Վերապահելով իրենց իրաւունքները, այդպիսինները իրենց պայմանաւոր նուիրատուութեամբը ի կենդանութեան Աղգին եւ Հայրենիքին կը թողուն Հիմնադրամ մը, առանց որուն կորստեան պիտի դատապարտուէր, կամ օտարներու ձեռքը պիտի անցնէր, եւ գուցէ մութին մէջ պիտի կորսուէր, ոեւէ հետք չձգելով։

Աւա՛զ, ո՛րքան հարստութիւններ, անտարբերութեան կամ ձգձղումներու հետեւանքով, կորսուած են վերջ ի վերջոյ, դլխաւորաբար Հնդկաստանի եւ Ամերիկայի մէջ։ Գէթ վերջին քառորդ դարու շրջանին, քիչ մը հեռատեսութեամբ եւ բարեացակամութեամբ, շատ մը Հայեր Հ. Բ. Ը. Վիութեան հետ կնքելով կտակային պայմանագրութիւն մը, ոչ միայն պիտի կրնա-

յին անմահանալ, յաւերժացնելով իրենց անունն ու յիշատակը, այլ եւ մեր բազմակարօտ Ազգն ու վերականգնող Հայրենիքը պիտի օժտէին օգտաշատ բարեգործութիւններով:

Կը բաւէ աչքի առջեւ ունենալ այն բացարձակ հաստարմութիւնը որով մինչեւ այսօր յարգուած են Միութեան յանձնուած կտակները եւ նուիրատութիւնները, ինչպէս նաեւ այն ամենալայն համարատութիւնը որ կ'ըլլայ անոնց գործադրութեան մասին, եւ կամ յարգալից յիշատակութիւնը որով ամէն առթիւ կը պանծացուին իւրաքանչիւր Հիմնադրամի ազգօդուտ նպատակն ու Բարերարին անունը:

Պարզ է որ՝ եթէ, ժամանակի հոլովմամբ, կեղը. Ժողովը տեսնէ որ նիւթապէս անկարելի է գործադրել դրուած պայմաններէն մէկը, կրնայ բարեփոխել անիկա, պատճառաբանեալ որոշումով մը, ըստ կարելոյն մօտենալով կտակարարին եւ նուիրատուին մտադրութեան, եւ իհարկին համաձայնելով նպաստընկալ կամ իրաւատէր անձին կամ մարմնոյն հետ (Հիմ. Կանոնագրի 9րդ. Յօդուած, Բ. Հատուած):

Արդարեւ, տարիներու ընթացքին, համաշխարհային առաջին պատերազմէն վերջ, բազմաթիւ կտակներ եւ հիմնադրամներ որ Թուրքիոյ մէջ այլեւս չէին կրնար օգտագործուիլ, օրինական փաստարկումով սահմանուեցան Հայաստանի եւ մի քանին ալ արտասահմանի նպատակայարմար ձեռնարկներու, առանց շեղելու կանխորոշուած հիմնական նպատակներէն:

## Ի՞նչ ՏԵՍԱԿ ԿՏԱԿ ԸՆԵԼՈՒ է

Կտակին տեսակը կ'ըլլա՞յ: Այո՛, Բարեգործականը երկու տեսակ կտակ կ'ընդունի ընդհանրապէս:

Առաջինը, ամէնուս գիտցած ավորական կտակն է, զոր հեռատես ոգիով մը կ'ընեն, յօգուտ ազգօգուտ նպատակի մը: Այդ կտակը, եթէ ջնջուած չէ, կը գործադրուի յետ մահու: Ամէն երկրի օրէնքները կը նշդեն թէ կտակը ի՞նչպիսի պայմաններու տակ պէտք է ըլլայ, որ վաւերական արժէք ունենայ: Օրինակի համար, Ֆրանսայի մէջ կը բաւէ որ կտակարարը իր ձեռքովը պատրաստէ կտակագիրը, ստորագրէ եւ թուականը դնէ, առանց ուրիշ ոեւէ ձեւակերպութեան:

Երկրորդը կտակամեւ նուիրատութիւն մըն է, այսինքն պայմանաւոր, զոր ի կենդանութեան կ'ընէ աւելի հեռատես անձ մը (ասիկա Հ. Բ. Ը. Միութեան Հիմնադրամներուն մեծամասնութիւնը կը կազմէ):

Կտակարարը կամ եւս նուիրատուն, իր ողջութեանը, իր ձեռքովն իսկ կը կարգադրէ ամէն ինչ, Բարեգործականին յանձնելով կամ անոր անուան արձանագրելով ինչ որ Ազգին կամ Հայրենիքին բաժին կ'ուզէ հանել իր հարստութենէն, առանց սակայն երաժարելու այն ամէն իրաւունքներէն եւ առաւելութիւններէն զոր իբր սեփականատէր կը վայելէ մինչեւ իր մահը:

Այդ մասին կ'ընէ ինչ վերապահում կամ յատկացում որ յարմար կը դատէ, պայմանագրութեամբ մը որուն մէջ Հ. Բ. Ը. Միութիւնը կուտայ կարելի ամէն երաշխիք, ի հարկին դրամա-

տան կողմէ եւս հաստատուած, որ ցորքան ինիք (կամ իր կինը եւ ուրիշ մը) ողջ է, նուիրատուն բացարձակ իրաւունքը ունի անձնապէս մատակարարելու իր Հիմնադրամը եւ ստանալու անոր եկամուտները, եթէ ատիկա է իր ցանկութիւնը:

Այս սեսակ կտակաձեւ նուիրատուոթիւն մը կ'ընծայէ նուիրատուին այն ամէն առանձնաշնորհումները գոր պիտի վայելէր յետ մահու գործադրելի կտակ մը ըրած պարագային, եւ բարեբախտաբար, առանց կտակին անպատեհութիւնները ունենալու, ողջուրեանն իսկ անոր կը պարզեւէ սրտի գոհունակութիւնը, հոգեկան անփոխարինելի վայելքը, Ազգին իրական բարիք մը ըրած ըլլալու, որ վստահաբար չէ քեական եւ գուցէ ժխտական, ինչպէս երբեմն կ'ըլլայ, օրին մէկը կտակին փոփոխմամբը կամ նոյն իսկ ջնջումովը:

Կարելի է նոյն իսկ Թրըսթի վերածել պայմանաւոր նուիրատուոթեան մը Հիմնադրամը, յաւերժօրէն երաշխաւորելու համար անոր անձեռնմխելիութիւնը:

Մէկ խօսքով, յետ մահու գործադրելի կտակէն շա՞տ աւելի գործնական եւ նպատակայարմար է ի կենդանութեան պայմանաւոր նուիրատուոթիւն մը:

Հետեւաբար, կտակ մը ստորագրելէ առաջ պէտք է այդ ուղղութեամբ ուսումնասիրել հարցը, ըստ այնու շա՞տ աւելի հաստատուն հիմքերու վրայ դնելու համար այդպիսի ազգային հիմնադրամ մը:

Կը կրկնենք, Հ. Բ. Ը. Միութեան վստահուած 93 մասնաւոր Հիմնադրամներուն մեծագոյն մասը ի կենդանութեան պայմանաւոր նուիրատուոթիւններ են:

## L U E'

Լըսէ՛, ընկեր, խօսքեր ունիմ քեզ շիտակ,  
Չըլլա՛յ ապրած կեանիք առնես գերդ կատակ.  
Կեանի մը այդպէս չունի երբեք նպատակ,  
Երբ լոկ վաղանց հանոյքի է հըպատակ:

Ո՛չ մէկ շահ կայ ապրելէ կեանի մ'անգիտակ.  
Գիտես, մարդիկ ի՞նչ կը դնեն վրադ պիտակ՝  
Երբ անկեղծ խօսք լըսելու դուն չես ատակ.  
Տե՛ս որ չերքաս ամէն ինչովդ ոտքի տակ:

Բարի, խոհեմ ապրէ՛ կեանիքը բովանդակ,  
Վայելքդ ըլլայ ազնիւ, բընա՛ւ այլանդակ:  
Անձնակեդրոն կեանի մը նեղ է այն գիտակ  
Մարդուն, որ լայն տեսիլք ունի, սիրու մ'ալ տագ:

Այլասէրին գլխուն վայել է գրդակ,  
Բայց պատուական ազգասէրին՝ ոսկի քագ:  
Կ'ուզե՞ս որ ազգդ յարգէ միշտ քու յիշտակ,  
Պարտքըդ պէտք է հատուցանես շիփ շիտակ:

Անպտուդ ծառն իսկ շուք մ'ունի՛ երբոր տագ  
Օդին անցորդ մը գայ նստիլ անոր տակ:  
Մա՛րդ ես, ընկեր, չըլլաս անշուք այր պիտակ,  
Չըլլայ մոռնաս անուանիդ վայել քու կը ՏԱԿ:

ԳՐ. Հ. ԳԱԼՈՒՍԵԱՆ

## ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿՏԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Կտակը հանդիսաւոր կարդաղութիւն մըն է, զոր անձ մը կ'ընէ իր սեփականութեան մասին, եւ որ ի զօրու կ'ըլլայ անոր մահէն յետոյ: Որքան ատեն որ կտակարարը ողջ է, կտակը ոչ մէկ դեր կրնայ կատարել, որովհետեւ ան կրնայ փոփոխման ենթարկուիլ, ջնջուիլ կամ փոխարինուիլ ուրիշ նոր կտակով մը: Կտակարարին մահէն վերջ, կտակադիրը կ'որոշէ թէ ի՞նչ նպատակներու պիտի յատկացուի հանդուցեալին ժառանգութիւնը եւ որո՞նք են այն անձերը որ այդ նպատակները պիտի գործադրեն:

Երբ մէկը կտակ ըրած չըլլայ, իր մահէն վերջ իր շարժուն ստացուածքները կը բաժնուին այն նահանդին օրէնքին համաձայն ուր ինք կը բնակէր, եւ նոյնպէս անշարժ ստացուածքները եւս իր ժառանգորդներուն կ'երթան ըստ այն նահանդին օրէնքին ուր այդ անշարժ ստացուածքները կը դանուին: Միացեալ նահանգներու զանազան շրջաններուն մէջ, շարժուն եւ անշարժ ստացուածքներու ժառանգութեան օրէնքները միօրինակ չեն: Շատ յաճախ, երբ մէկը կը մեռնի առանց կտակի, իր սեփականութիւնը, բնակած նահանդին համաձայն, կ'երթայ այնպիսի ժառանգորդներու որոնց գուցէ նուազագոյն դիտաւորութիւնն իսկ չունէր բան մը ձգելու, եւ երբ ժառանգորդ կոյութիւն չունի կամ կարելի չըլլար դանել, նահանդն է որ կը տիրանայ հանգուցեալին սեփականութեան:

Քանի որ մահը ստոյգ բան մըն է եւ անոր ժամանակը անորոշ, կարեւոր է որ մարդ կանուխէն իր կտակը ընէ, առանց նկատի առնելու իր տարիքը եւ իր ստացուածքին արժէքը:

Երբ մէկը կտակ կ'ընէ , պատեհութիւն կ'ունենայ նշանակելու ժք կտակակատարը կամ կտակակատարները , այսինքն այն անձը կամ անձնը որոնց կը փափաքի վտահաճիլ իր ստացուածքը , ինչպէս նաեւ իր գործը հաշուեյարդարի ենթարկելու , իր պարտքերը վճարելու եւ իր ստացուածքին աւելցած հարստութիւնը իր կտակին համաձայն յանձնելու հոգերը : Կտակակատարները աղատ են կտակով նախատեսուած իրենց պարտականութիւնները հաստարմօրէն գործադրելու համար յանձնառութիւն մը ստորագրելու կամ ոչ :

Երբ կտակ գոյութիւն չունի , դատարանը վարիչ մը կը նշանակէ այս գործողութեանց կատարման համար , բայց վարիչը կը յանձանձէ միայն շարժուն ստացուածքները , իսկ անշարժները ժառանգորդներուն կներթան վերեւ ըսուած ձեւով :

Միշտ խոհանութիւն է որ կտակ մը պատրաստով փաստարանի մը ձեռքով եւ անոր ներկայութեան ստորագրեն կտակարարն ու վկաները : Երբ կտակի մը տրամադրութիւնները տարտամ են եւ կտակարարին դիտաւորութիւնը յստակ չէ , կամ երբ անոր մէջ պայմաններ կան որ հակառակ են հանրային կարգին կամ երկրին օրէնքներուն , ատոր հետեւանքը կ'ըլլան անտեղի վէճեր եւ աւելորդ ծախքեր , որ ստացուածքին արժէքը կը նուազեցնեն :

Շատ մը նահանգներու օրէնքները կը պահանջեն որ կտակարը ստորագրէ երկու վկաներու ներկայութեան , եւ նաեւ վկաները ստորագրեն կտակարարին եւ իրարու ներկայութեան : Ասիկա կրնայ շատ պարդ պահանջում մը թուիլ , եւ սակայն բազմաթիւ կտակներ մերժուած եւ չեղեալ նկատուած են , որովհե-

տեւ նահանդին օրէնքներուն գոհացում չեն տուած։ Կտակի մը մէջ ոեւէ փոփոխութիւն կամ անոր յետս կոչումը պէտք է դարձեալ կատարուի վկաներու ներկայութեան։ Անոր մէջէն երբ բառ մը կամ տրամադրութիւն մը ջնջուի, կամ նոր պայման մը աւելցուի հոն, եթէ նոյն իսկ կտակարարին ձեռագրուն ըլլայ եւ անոր կողմէ ստորադրուի, դատարանը նկատի չառներ, եթէ այդ գործողութիւնները յիշուած պայմաններով չեն կատարուած։

Կտակ մը գրելու համար մասնայատուկ բացատրութիւններու պէտք չկայ։ Որքան պարզ բառերով գրուի, այնքան աւելի լաւ է։ Միացեալ Նահանդներու մէջ հետեւեալ բանաձեւը կը նշայ գոհացում տալ ամէն բարի Հայու— Armenian General Benevolent Union, Inc. ին կը կտակեմ . . . տոլարի գումար մը։ Ստացուածքիս մնացեալը կուտամ կնոջս եւ դայն կը նշանակեմ իմ կտակակատարս, յայտնելով թէ ան յանձնառումներ ստորագրելու պէտք չունի իր պարտականութեանց հաւատարիմ դորժադրութեան համար։»

Կամ հակառակը—

«Կնոջս (կամ այսինչին) կը թողում . . . տոլար եւ մնացեալը Հ. Բ. Բ. Միութեան, եւն. եւն.»

## ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿՏԱԿԱԴՐԻ ՆՄՈՑՇ ՄԸ

Ես, . . . . . , որ կը բնակիմ . . . . .

(ամուս մռկամուն)

(հասցե՝ քաղաքի, նահանգի և երկրի տնօւթով)

Ներկայիւս կը յայտնեմ եւ կը յայտարարեմ թէ ասիկա իմ վերջին կամքս եւ կտակս է, որ կը ջնջէ մինչեւ հիմա իմ կողմէ ոեւէ ատեն կատարուած կտակները կամ անոնց վրայ եղած յաւելումները :

Առաջին.— Հրահանդ կտառամ որ իմ բոլոր ստուգուած պարտքերս, թաղման եւ կտակային ծախքերս, մահէս վերջ վընարուին, անմիջապէս որ գործնականապէս հնարառոր ըլլայ:

Երկրորդ.— Ամերիկայի ինքորբորէյդը Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան կը կտակեմ . . . . տոլարի գումար մը:

Երրորդ.— Ժառանդութեանս ամբողջ մնացորդը, ինչ բանէ որ ալ բաղկացած ըլլայ եւ ուր որ ալ դառնուի, կուտամ եւ կը կտակեմ . . . ի, եւ զինքը կտակակատարս կը նշանակեմ իմ այս վերջին կամքովս ու կտակովս, մւ կը յայտարարեմ թէ մասնաւոր յանձնառագիր մը ստորագրելու պէտք չունի՝ իր պարտականութեանց հաւատարիմ կատարման համար:

Չորրորդ.— Եթէ պատահի որ ան ինձմէ առաջ մեռնի, եւ կամ մեռնինք երկուքս միաժամանակ, այն ատեն ժառանդութեանց հաւատարիմ կատարման համար:

թեանս ամքողջ մնացորդը, ինչ բանէ որ ալ բաղկացած ըլլայ եւ ուր որ ալ գտնուի, կուտամ եւ կը կտակեմ . . . . . ին եւ զինքը ներկայիւս կտակակատարս կը նշանակեմ, եւ կը յայտարարեմ թէ մասնաւոր յանձնառագիր մը տալու պէտք չունի՝ իր պարտականութեանց հաւատարիմ կատարման համար:

Հիմնգերորդ.— Կ'արտօնեմ կտակակատարս, որ վաճառէ, փոխանցէ, վարձու տայ, գրաւի գնէ եւ հաշուեյարդարի ենթարկէ ուրէ մէկ մասը կամ ամքողջը շարժուն կամ անշարժ ստացուածքիս որ իմ սեփականութիւնս է մեռած պահուս, եւ կատարէ ուրէ գործողութիւն որ անհրաժեշտ է՝ գործադրելու համար իմ այս վերջին կամքիս եւ կտակիս տրամադրութիւնները:

Որոնց ի վկայութիւն հոս ստորեւ կը դնեմ ստորագրութիւնս ու կնիքս, այսօր . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

Վկաներ

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

Վերեւի կտակագիրը ստորագրուած, կնքուած, հրատարակուած է, եւ յայտարարուած յիշեալ . . . . . . . . . ի կողմէ իրեւ իր վերջին կամքն ու կտակը, մեր ներկայութեանը, որ իր խնդրանքով եւ իր ներկայութեան, ինչպէս նաեւ մեր իրարուներկայութեան, հոս ստորեւ կը դնենք մեր անունները իրեւ վկայ:

(հասցէ)

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

(հասցէ)

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

Տ. ՍՄՍԱՐԵԱՆ

# ՄԻՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒՈՅ ՈՍԿԵՄԱՏԵԱՆԸ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՄՆ. ԿԱՆՈՆԱԳՐԻՆ

70Դ. ՅՈՒԹԻԱԾԻՆ ՀԱՄԱՁԱՅՆ

Ա.- Բարերար Անդամի տիտղոսը կը տրամի այն անձերուն որ մէկ անգամէն առնուազն 25,000 Զուից. Փրամիք կը նուիրեն Հ. Բ. Ը. Միութեան (որպէս մուտքի տուրք կամ հիմնադրամ) :

Բ.- Պատուոյ Անդամի տիտղոսը այն անձերուն որ առ նուազն 10,000 Զուից. Փրամիքի նուիրառութիւն մը կ'ընեն:

Միութիւնը այսօր ունի 83 Բարերար Անդամներ եւ 118 Պատուոյ Անդամներ, որոնցմէ ոմանք Միութեան բացառիկ ծառայութիւններ մատուցած ըլլալնուն համար այդ յաւերժական մեծարանին արժանացած են:

ԵՐԲ ՔՈՒ ԱՆՈՒՆԴ ԱԼ ՊԻՏԻ ԱՐՁԱՆԱԳՐԵՆՔ  
ՍՈՑՆ ՊԱՏՈՒՈՅ ՈՍԿԵՄԱՏԵԱՆԻՆ ՄԵԶ

## Կ Տ Ա Կ Ն Ի Դ Լ Ր Է Ք

Կտակնիդ ըրէ՛ք, այսօր իսկ, առանց յետաձգելու վաղուան:

Հեռատես մարդը ժամանակին կ'ընէ իր կտակը, վայելելու համար խղճի եւ մտքի հանդարտութիւն:

Ուզեցէք յետ մահու կտակի կամ ի կենդանութեան նուիրատութեան ծրագիր մը, որսկէս զի ճշգրիտ գաղափար մը կազմէք թէ ի՞նչ կարելի է ընել օրինական լաւագոյն պայմաններու մէջ:

Խորհրդապահութեան պայմանը կը յարգուի հաւատարմօրէն: Նոյն իսկ Հիմնադրամներ ունինք որ ըստ պայմանի անանուն կը պահուին, ատեն մը:

Քանի որ ամէնէն բծախնդիր եւ խստապահանջ Հայերն անդամ իրենց հարստութիւնը, ոմանք մասսամբ եւ ոմանք ալ ամբողջովին, կը վստահին Հ. Բ. Բ. Միութեան, յոյս ունինք որ դուք ալ չէք վարանիր անոր վստահելու ձեր հիմնադրամը, մեծ կամ փոքր:

Գիտէ՞ք որ, 1910-էն մինչեւ 1946, Միութեան Դրամագլուխներուն գումարն է շուրջ 5 միլիոն տոլար կամ 1 միլիոն 250,000 անգլ. ոսկի:

Այսօր, ո՛վ որ Ազգին եւ Հայրենիքին համար բարի ցանկութիւն մը ունի, անվերապահօրէն կը դիմէ

Հ. Բ. Ը. Միութեան: Ի՞նչու: Որովհետեւ վստահ է որ անիկա խղճմտօրէն պիտի գործադրէ իր կամքը եւ պիտի յաւերժացնէ իր անունը:

Բարեգործութեան կոթողը յաւերժական յուշարձան մըն է՝ զոր ազգասէր Հայը իր ձեռքովը կը կանգնէ եւ իր աչքովը կը տեսնէ, իր կենդանութեանն իտկ:

Հետեւեցէք ուրեմն Նուպարներու, Մելգոնեաններու, Յակոբեաններու, Մարկոսեաններու եւ ուրիշ անմոռանալի Բարերարներու բարձր օրինակին, որպէս զի ձեր կարգին բարի օրինակ հանդիսանաք եւ ձեր անունն ալ պանծացնէք անոնց անմահ անուններուն քով։

Քարնէկիներ եւ Ռոքֆէլլերներ չանմահացան իրենց ահագին հարստութիւններով, այլ միայն իրենց հոյակապ բարեգործութիւններով։

Մեծ հոգիները միայն գիտեն լիապէս վայելել հարստութիւնը որուն տիրացած են, ոչ թէ պերճանքի մէջ որ կեանքին նման վաղանցուկ է, այլ մանաւանդ բարեգործութեան մէջ, որ անմահութեան նման յաւերժական է։

\* \* \*

Ի ԿԵՆԴԱՌՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԵԱՆ  
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԸ ՄԱՍԻՆ

Նախ, սոսկ իբրեւ թելադրութիւն, թուենք քանի  
մը ազգօգուտ նպատակներ որոնց համար կարելի է ըստ  
նախասիրութեան կտակներ կամ նուիրատուութիւններ  
ընել.- Հայաստանի մէջ, վերաշինական ձեռնարկներ  
(ինչպէս Նուպարաշէն), ճարտարարուեստական ճիւ-  
ղեր, հողագործական եւ այլ մեքենաներ ու գործիք-  
ներ, հիւանդանոց, համալսարան, վարժարան, մշա-  
կութային ձեռնարկներ, մրցանակներ, ներգաղթ եւ  
բնակարանի շինութիւն, եւն.։ Գաղութահայութեան  
համար՝ վարժարաններ, կրթական վարկեր, ուսանո-  
ղական, հրատարակչական եւ այլ մշակութային, երի-  
տասարդական եւ մարմնակրթային ձեռնարկներ, գրա-  
դարան, ընթերցասրահ, որբանոց, անկելանոց, ար-  
հեստանոց, բուժարան, բժշկական սպասարկութիւն,  
օգնութեան վարկեր, եւն.։

Անօգուտ չենք նկատեր այս գլխին մէջ նոյն իսկ  
ընել կրկնութիւններ:

Նուիրատուն Միութեան կը յանձնէ դրամ կամ  
արժեթուղթեր, անոր թողլով այդ Հիմնադրամը կա-  
ռավարելու եւ եկամուտները իր նշանակած նպատա-  
կին յատկացնելու հոգը։ Նուիրատուութեան այս ձեւն  
է ամէնէն յաճախաղէպը։ Բաց աստի, նուիրատուն

կրնայ պայման դնել որ ցմահ եկամուտը իրեն կամ ուրիշի մը վճարուի։ Կրնայ նաեւ իր Հիմնադրամը Թրըսթի վերածել, պայման դնել որ դրամատունը Միութեան հետ համախոհաբար մատակարարէ Հիմնադրամը եւ տարեկան եկամուտը Միութեան յանձնէ, իր նպատակին յատկացուելու համար։ Վերջապէս, կայ բարեգործութեան ուրիշ դիւրին եղանակ մը եւս, որ բաւական ընդհանրացած է, մանաւանդ Ամերիկայի մէջ,— կեանքի ապահովագրութիւնը, յօգուտ Միութեան ձեռնարկներուն եւ հիմնարկներուն։

Այսուհանդերձ, յստակ գաղափար մը տալու համար, ստորեւ կը ներկայացնենք նուիրատութեան պայմանագրութեան մը կորիզը, որ լայն գոհացում կրնայ տալ ամէնէն վարանող Հայուն իսկ, եւ որ թոյլ կուտայ իրեն լրիւ ըմբռնել թէ առանց իսկական զոհողութեան, այսինքն գրեթէ իր հարստութիւնը եւ ազատութիւնը պահելով հանդերձ, կրնայ անմիջապէս (այսինքն չի սպասելով իր մահուան) բարեգործութիւն մը ընել, ազգօգուտ եւ հայրենաշէն նպատակի մը համար։

Նուիրատուն եւ Հ. Բ. Ը. Միութիւնը միասին կը կնքեն նոտարական համաձայնութիւն մը, որուն հիման վրայ նուիրատուն դրամատան կը յանձնէ դրամ եւ արժեթուղթեր, Հ. Բ. Ը. Միութեան անունով, մինչեւ իսկ պայման դնելով որ, մինչեւ իր մահը, ինք պիտի կառավարէ պահ դրուած դրամն ու արժեթուղթերը, ի հարկին պիտի կրնայ դրամատունէն դրամ

կամ արժեթուղթ ետ առնել (գէթ մասամբ անձեռնմխելի թողլով նուազագոյն որոշ գումար մը), ինք պիտի ստանայ բոլոր եկամուտները, նոյնպէս եւ իր մահէն վերջ, եթէ ուղէ, իր յաջորդը եւս ցմահ պիտի ունենայ համանման եւ կանխորոշ իրաւունքներ։ Այս բորոլորը Հ. Բ. Բ. Միութեան կողմէ բացայայտ յանձնառութեամբ հաստատուած, այնպէս որ Միութիւնը յետագային միայն պիտի կրնայ ձեռք դնել մնացեալ դրամին եւ արժեթուղթերուն վրայ։ Ասոնք ըստ պայմանի կ'ըլլան անձեռնմխելի (մշտնջենապէս կամ առժամանակամատանի կ'ըլլան անձեռնմխելի), իսկ եկամուտները կը գործածուին Միութեան սեփական ձեռնարկներուն, եթէ արդէն նուիրատուն կանխաւ չէ ճշդած ուրիշ նպատակ։

Ընդհանրապէս այդպիսի պայմանագրութիւններ կը կնքուին առանց դրամատան միջամտութեան, այսինքն միայն նուիրատուին եւ Միութեան միջեւ, համաձայն առաջնոյն յայտորոշած տրամադրութեանց դոր Միութիւնը յանձն կ'առնէ յարդել թէ՛ ի կենդանութեան եւ թէ՛ վերջը, բայց, եթէ ուղուի, դրամատումն ալ կը մասնակցի պայմանագրութեան եւ իր յանձնառութեամբը նուիրատուին կ'ընծայէ պէտք տեսած երաշխաւորութիւնը։

Այսպիսի պայմանագրութիւն մը ոչ միայն ամէն ապահովութիւն կուտայ նուիրատուին, իր դրամին եւ արժեթուղթերուն անկաշկանդ յանձանձման եւ անոնց եկամուտներուն աղատօրէն գանձման մասին, ցորքան

ինք եւ իր նշանակած յաջորդը ողջ է, այլ եւ իր կենդանութեանը սրտի հանգստութեամբ հաստատուն դետնի վրայ կը դնէ բարեգործութեան կանխատեսուած ձեռնարկ մը, որ յետ մահու կտակի մը բոլոր առաւելութիւնները ունի, առանց անոր անխուսափելի դժուարութեանց :

Ի՞նչ աւելի նպատակայարմար կարգադրութիւն անզաւակ աղդայիններու համար, եւ նոյն իսկ անոնց համար որ կը փափաքին իրենց անպաշտպան այրիին եւ անչափահաս զաւակներուն ապահովել եկամուտ մը կամ եկամուտին մէկ մասը, զոր Հ. Բ. Ը. Միութիւնը պարտաւոր կ'ըլլայ վճարել անոնց, մանաւանդ որ Միութիւնը, որպէս զուտ բարեգործական ընկերակցութիւն, ընդհանրապէս զերծ է տուրքէ, օրինակի համար, Ամերիկայի մէջ եղած նուիրատուութիւնները արդէն տուրքէն կը դեղչուին, երբ կ'ըլլան Ամերիկայի ինքորբորէյթը Հ. Բ. Ը. Միութեան :

## ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՆՄՈՅՆ ՄՀ

1. — Տ. Ք. . . . . (կամ իր փոխանորդը . . . . .),  
և 2. — Հ. Բ. Ը. Միութիւնը, յանձին իր ներկայացուցիչնե-  
րուն, . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . ,

Հետեւեալ կերպով կը համաձայնին ու կը պայմանաւորուիմ։

ՅՈՒՂԻԱԾ 1.— Տ. Ք. իր յօժար կամքովը Հ. Բ. Ը. Միու-  
թիւն կը նուիրէ և կը յանձնէ . . . . դրամ և հետեւեալ  
արժեքուղթերը, որոնց օրուան արժեքն է.....:

ՅՈՒՂԻԱԾ 2.— Տ. Ք. ի կենդանութեան սոյն նուիրատու-  
թիւնը Հ. Բ. Ը. Միութեան կ'ընէ հետեւեալ պայմաններով։

Առաջին, նուիրատութեան մայր-գումարը, դրամատոն մը  
մէջ պահ դրուած՝ Միութեան ամունով և հաշուոյն, անձեռն-  
միսելի պիտի մնայ և «Բ. Հիմնադրամ» յորզորդումը պիտի կը։

Երկրորդ, Տ. Ք. իր ողջութեանը ուղղակի ինք պիտի մա-  
տակարարէ Հիմնադրամը, ցմահ ինք պիտի գանձէ եկամուտ-  
ները իր անձնական պէտքերուն համար, նաեւ ազատ պիտի ըլլայ  
պատրաստ դրամով արժեքուղթ գնելու և արժեքուղթերը ծա-  
խելու և փոխանակելու, նոյն իսկ ի հարկին մայր-գումարին առ  
առաւելն 80%-ը իր պէտքերուն գործածելու։

(Եւ կամ.— Երկրորդ, Հ. Բ. Ը. Միութիւնը պիտի մատա-  
կարարէ Հիմնադրամը և նուիրատուին պիտի յանձնէ տարեկան  
եկամուտներուն գումարը։)

30ԴՈՒԱԾ 3— Տ. Բ. ի մահուընէ վերջ, Հ. Բ. Ը. Միութիւնը, յանձնին իր Կեդր. Վարչ. Ժողովին, պիտի մասակարարէ այս Հիմնադրամը եւ ազատ պիտի ըլլայ արժեքուղբերը ծախելու եւ փոխանակելու։ Եկամուտներուն գուտ գումարը տարուէ տարի պիտի գործածէ հետեւեալ կերպով ... հարիւրին .....ը պիտի վճարէ .....ին, իսկ մնացեալը պիտի յառկացնէ Միութեան նպատակներուն եւ ճեռնարկներուն (եւ կամ նուիրատուին կողմէ կանխորշուած հետեւեալ նպատակներուն .....):

30ԴՈՒԱԾ 4— Հ. Բ. Ը. Միութիւնը կ'ընդունի վերոգրեալ բոլոր պայմանները եւ յանձն կ'առնէ նուիրատուին կամքը խըզնմըսորէն գործադրել, ներկայ պայմանագրութեան եւ Հիմն. Կոմինագրի տրամադրութեանց համտակայն։

Հ. Բ. Ը. Միութիւնը 40 ՏԱՐՈՒԱՆ ՄԻԶՈՅԻՆ ԱԽԵԼԻ ՔԱՆ  
6 ՄԻԼԻՈՆ ՏՈԼԱՐԻ ԲԱԶՄԱՉԱՆ ՆԳԱՍՏՆԵՐ ՑԱՏԿԱՑՈՒՑԱՆ է։

## ՄԻՈՒԹԵԱՆ ԿՏԱԿԱՑԻՆ ԱՐՇԻՎԸ

Հ. Բ. Բ. Միութեան կտակներու եւ նուիրատուութեանց պարութաները իրենց ամփոփոյթներով եւ յուշագրութիւններով, դասաւորուած, թուագրուած, ցանկագրուած, կը ներկայացնեն գրեթէ նոտարական գիւանատան մը պատկերը: Ամէնէն ստուարաթիւ պարութաներուն դէղերը Մելգոնեան, Նուպարեան եւ Յակոբեան Հիմնադրամներունն են, որովհետեւ անոնք ընդարձակ թղթակցութիւններ, արճանագրութիւններ եւ հաշուագրութիւններ կը պարունակեն:

Բացի ընծայաբերուած, ընդունուած եւ արճանագրուած մնայուն եւ անձեռնմխելի Հիմնադրամներէն, որ գործադրուելով սպառած են, եւ կամ Միութեան Մասնաւոր Դրամագլուխին մէջ մտած են գանձուած օրէն սկսեալ, Հ. Բ. Բ. Միութեան ներկայացուցուած են նաեւ ուրիշ բազմաթիւ կտակային հիմնադրամներ եւ պայմանաւոր նուիրատուութիւններ, որոնց մէկ մասը թէեւ ընդունուած, բայց տակաւին չեն գանձուած, յարակից բանակցութիւնները եւ ձեւակերպութիւնները լրացած չըլլալով, իսկ մէկ կարեւոր մասն ալ անհետեւանք մնացած են, Միութեան կողմէ յետքնութեան մերժուած եւ կամ թէ առաջարկը ետ առնուած ըլլալուն ոլատճառաւ, ու կան նաեւ կտակներ եւ նուիրատուութիւններ որ ծրագրային վիճակի: մէջ գտնուելով՝ առկախ բոնուած են: Այդպիսինները կը կազմեն առանձին ցուցակներ եւ պարութաներ, որ բաւական մեծ տեղ մը կը գրաւեն Միութեան կեղրոնական գիւանատան մէջ:

## ՀԻՄԱԴՐԱՄՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆ ՓՈԽԱՆՑՈՒԱԾ

ՏԱՐԲԵՐ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՈՒԱԾ  
ԱՆԴՈՐԾԱԴՐԵԼԻ ԿՏԱԿՆԵՐ ԶՈՐ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆԸ  
ՅԵՏԱԳԱՑԻՆ ՅԱԶՈՂԱԾ Է ՅԱՏԿԱՑՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ

1.— Մեօքէմէտեան Հիմնադրամ, որուն եկամուտները ծառայած են և. Հայաստանի մէջ նոր Եւղոկիոյ գիւղին կառուցման եւ անոր ընդարձակման, ինչպէս նաև Բարերարին անունը կրող դպրոցի մը շինութեան:

2.— Երուանդ Յակոբեան Հիմնադրամ, որուն եկամուտներով կառուցուած են Շիրազալա եւ Բլխեր գիւղերու վարժարանները:

3.— Գայեանէ Նշկեան Հիմնադրամ, որուն ամբողջութիւնը գործածուած է Ագարակ գիւղի վարժարանի շինութեան:

4.— Պօղոս Նուպարի մասնայատուկ Հիմնադրամ, որուն դիգուած եկամուտները յատկացուած են Մարի Նուպար Ակնարուժարանի շինութեան եւ կահաւորման:

5.— Դարուիի Յակոբեան Հիմնադրամ, որուն դիգուած եկամուտներով հիմնուած է Դարուիի Յակոբեան Մայրանցը եւ Մանկարարական Վարժարանը:

6.— Նուպարեան Հիմնադրամ, որ նոյնութեամբ յատկացուած է Երեւանի մէջ Բարեգործական Տան շինութեան, բրօֆէսէօմերու եւ գիտնականներու բնակութեան համար:

7.— Աւետ Սարգիս Հիմնադրամ, որով կառուցուած է Խ. Հայաստանի մէջ Բարեկօրեան կատաղարուժարան մը:

8.- Իօերեան Հիմնադրամ, որուն մէկ մասովը շինուած է Խ. Հայաստանի մէջ Մեղուարուծական Վարժարան մը:

9.- Հանի Մկրտիչ Յովհաննէսեան Հիմնադրամ, Նոր Խարբերդի մէջ Վարժարանի մը շինութեան յատկացուած:

10.- Գեորգ Սարգիսեան Հիմնադրամ, որուն եկամուտները յատկացուած է Նուպարաշէնի Նոր Ակն քաղամասին կառուցման:

11.- Մինաս Զերազ Հիմնադրամ, Արևեստից գիւղային դպրոցի մը համար:

12.- Արամիկ Էգնայեան Հիմնադրամ, եկամուտները յատկացուած Նուպարաշէնի:

13.- Տիգրան Չամբերքէն Հիմնադրամ, Նոր Եւրոկիոյ ընդարձակման յատկացուած:

14.- Միքայէլ Սամուելեան Հիմնադրամ, եկամուտները Հայաստանի մէջ կրթական նպատակի յատկացուած:

15.- Ռափի. Մարկոսեան Հիմնադրամ, որմէ կարեւոր քաժին մը յատկացուած Խ. Հայաստանի մէջ Արևեստից Վարժարանի մը Հիմնարկութեան:

16.- Դաւիթ Մսրեան Հիմնադրամ, յօգուտ Հայաստանի մէջ օգտակար ճեննարկի մը:

17.- Վարդան Պապաեան Հիմնադրամ, յատկացուած Նուպարաշէնի մէջ Նոր Բաղէջ քաղամասին հաստատման:

ԾԱՆ.- Կեդր. Վարչ. Ժողովը միշտ կը հետամտի Հայաստան փոխադրել այն Հիմնադրամները կամ եկամուտները որ չեն կրմար գործածուիլ կամխռաշուած յատկացումներուն (Հիմն. Կանոնագիր, Յօդուած 9, Հառուած Բ.):

**ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿՏԱԿԱԴՐԱՄՆԵՐԸ**  
**(ՄԱՍՆԱԿԻՈՐ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ)**

1918—1946

|                            |                  |          |
|----------------------------|------------------|----------|
| 1.— Մարտիրոս Գագաննեան     | Ռւտոր            | 3983·81  |
| 2.— Մարտիրոս Սեւայեան      | Ռւտոր            | 1528·45  |
| 3.— Տոմք. Յովհ. Արշակունի  | Նիւ Եռք          | 5801·28  |
| 4.— Պետրոս Պօրաննեան       | Ֆրէզնօ           | 802·50   |
| 5.— Գարրիէլ Պօյաննեան      | Ֆրէզնօ           | 1721·74  |
| 6.— Տիրայր Ծ.Վ. Մարգարեան  | Ֆառւլըր          | 8069·76  |
| 7.— Խորէն Ծ. Վ. Լազարեան   | Պոսթոն           | 6818·68  |
| 8.— Տոմք. Արամ Հենիննեան   | Անամօզա          | 750·00   |
| 9.— Նիկողոս Մորճիկեան      | Նիւ Եռք          | 12726·40 |
| 10.— Փիրըր Յովհաննէսնեան   | Սէնք. Լուիս      | 2637·34  |
| 11.— Ալպէրթ Յակոբեան       | Ֆրէզնօ           | 1620·83  |
| 12.— Արթին Շաբաֆեան        | Նիւ Եռք          | 1400·00  |
| 13.— Գէորգ Թաշնեան         | Զըլսի            | 1000·00  |
| 14.— Յակոբ Մարտիրեան       | Նիւ Եռք          | 10000·00 |
| 15.— Տիկին Թումա Ռւգումեան | Սիմկըր           | 1000·00  |
| 16.— Սերոբէ Մովսէսեան      | Նիւ Եռք          | 16809·08 |
| 17.— Յակոբ Պօյաննեան       | Պոսթոն           | 2569·51  |
| 18.— Մանուկ Ասլաննեան      | Նիւ Եռք          | 7458·17  |
| 19.— Ստեփան Քէօլէեան       | Սփրիմկֆիլտ       | 10000·00 |
|                            |                  | —————    |
|                            | Համագումար Տոլար | 98647·55 |

## ՄԱՍՆԱԿՈՐ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Հ. Բ. Ը. Միութեան առաջին կտակները եւ նուիրատութիւնները եղած են 1910ին Եգիպտոսի մէջ: Թանթայէն՝ Վարդան Պապաեանի կտակը Եգիպտ. ուկի 2567, Զակազիկէն՝ Գրիգոր Մէօթէմէտեանի կտակը, 3000 Եդ. ոսկի արժողութեամբ աւելի քան 21 ֆէտան մշակելի երեք կտոր հող (Մէհտիյէ գիւղը, Շարքիյէ), զուտ հասոյթովը իր ծննդավայրին՝ Թոքատի մէջ վարժարան մը հիմնելու համար, եւ Տիգրան Խան Քէլէկեանի առաջին նուիրատութիւնը, 1000 անգլ. ոսկիի, յետոյ աւելցուած, իր եղբօր ողբ. Գէորգ Քէլէկեանի յիշատակին, Կիլիկիոյ մէջ Որբանոցի մը շնութեան համար (Տէօթ Եօլի մէջ կառուցուած):

Ատոնց յաջորդեցին, 1911ին, Սեղրաք Դաւիթեանի (Գահիրէ), Յակոբ Քըրքեաշարեանի (Հաճըն), Լեւոն Սէմէրճեանի (Պոլիս), Սահակ Կաթողիկոսի (Սիս) եւ Գէորգ Սարգիսեանի (Աղեքսանդրիա) կտակային նուիրատութիւնները, եւ այսպէս յաջորդաբար Հ. Բ. Ը. Միութեան տրամադրուած անձեռնմխելի Հիմնադրամներուն ընդհանուր ցուցակը առանձին կը ներկայացնենք, որպէս իսկական կոթող մը Հայ Բարեգործութեան:

Իրողութիւն է որ Միութեան Հիմնադրամներուն

աւելի քան երեք քառորդը Եղիպտոսի եւ մէկ կարեւոր մասն ալ Թրանսայի բարերարներուն կողմէ տրամադրուած է : Ամերիկահայութեան մասնակցութեան բաժինն է երկու առ հարիւր (շուրջ 100,000 տոլար) :

Մասնաւոր Դրամագլուխին մաս կազմող Հիմնադրամներու Ցուցակէն դուրս կը մնայ ազգային մեծագոյն բարերար Կարապետ Աղա Մելգոնեանի հսկայական Նուիրատութիւնը, աւելի քան կէս միլիոն անգլոսկի, որ, ի բաց առեալ անշարժ կալուածները, երկու թրլութի վերածուած է, մին Լոնտոնի Միտլէնտ Պէնքին եւ միւսը Նիւ Եորքի Նէշընը Սիթի Պէնքին մօտ, «Մելգոնեան ֆընտ» անունին տակ, որ, ինչպէս ըսինք, բացառապէս մաս կը կազմէ Սովորական Դրամագլուխին :



## ՄԱՍՆԱԿՈՐ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ

ԿՏԱԿՆԵՐԵ ԵՒ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐԵ ԳՈՅԱՑԱԾ  
ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ ԿԱՆԽՈՐՈՇ ՅԱՏԿԱՑՈՒՄՆԵՐՈՎ

|                                         |             |
|-----------------------------------------|-------------|
| 1 Ա. Մ. . . . .                         | 3192. 6. 0  |
| 2 Ալահվերտի Մկրտիչ . . . . .            | 3087.19. 2  |
| 3 Ազմամետն Յովհաննես . . . . .          | 147.18.11   |
| 4 Արշակունի Տոքր. Յովհաննես . . . . .   | 1343.19. 6  |
| 5 Բավելիգետն Մկրտիչ . . . . .           | 102.13. 2   |
| 6 Գաղացետն Նշան . . . . .               | 987.18. 3   |
| 7 Գաղամնետն Մարտիրոս . . . . .          | 896. 9. 9   |
| 8 Գալայնետն Գասպար . . . . .            | 750. 0. 0   |
| 9 Գարակէօցետն Գրիգոր . . . . .          | 641. 9. 3   |
| 10 Գափամանետն Տիկ. Նոյեմի. . . . .      | 17362.19. 5 |
| 11 Գափամանետն Պետրոս . . . . .          | 1. 0. 6     |
| 12 Գրեեաշարետն Յակոբ . . . . .          | 2268. 9.10  |
| 13 Դանիէլետն Ներսէս Եպիսկոպոս . . . . . | 703.18. 0   |
| 14 Դաւիթետն Սեդրաք . . . . .            | 432. 5.11   |
| 15 Էգմանետն Ավետիս . . . . .            | 198. 5. 2   |
| 16 Էգմանետն Արտամիկ . . . . .           | 7297.12.10  |
| 17 Էսմերետն Պօղոս . . . . .             | 2016. 2. 7  |
| 18 Թ. Տ. . . . .                        | 10213.15. 3 |
| 19 Թագուրետն Սարգիս . . . . .           | 226. 9.10   |

|                                                              |               |
|--------------------------------------------------------------|---------------|
| 20 Թօփալեան Սամուել . . . . .                                | 212 · 5 · 3   |
| 21 Թօփալեան Վաղարշակ . . . . .                               | 1964 · 17 · 9 |
| 22 Լազարեան Խորեն Վարդապետ . . . . .                         | 1345 · 6 · 5  |
| 23 Լիմոննելի Տիկ. Կատարինէ<br>(Եագուալ Արքին Փաշա) . . . . . | 4141 · 18 · 7 |
| 24 Խապաեան Վեհ. Սահակ Կաթողիկոս . . . . .                    | 438 · 8 · 10  |
| 25 Ա. Կ. . . . .                                             | 1136 · 7 · 4  |
| 26 Կիւմիւշեան Պետրոս . . . . .                               | 4634 · 10 · 2 |
| 27 Կոստանդեան Տոմք. Պօղոս . . . . .                          | 1 · 0 · 6     |
| 28 Հայկազեան Ռևումնասիրաց Ղնկ. . . . .                       | 363 · 1 · 5   |
| 29 Հանըմեան Ստեփան . . . . .                                 | 2084 · 18 · 6 |
| 30 Հենինեան Տոմք. Ա. . . . .                                 | 595 · 12 · 8  |
| 31 Ճանիկեան Տիկ. Թագուհի . . . . .                           | 5770 · 8 · 5  |
| 32 Մարգարեան Տիրայր Վարդապետ . . . . .                       | 1312 · 4 · 7  |
| 33 Մարկոսան Ռափիկ . . . . .                                  | 715 · 12 · 11 |
| 34 Մէօրէմէտեան Գրիգոր . . . . .                              | 3076 · 18 · 6 |
| 35 Միրզա Մարգար . . . . .                                    | 471 · 12 · 7  |
| 36 Մորեան Դաւիթ . . . . .                                    | 874 · 11 · 7  |
| 37 Մորնիկեան Նիկոլոս . . . . .                               | 2468 · 0 · 0  |
| 38 Մուղալեան Կարապետ . . . . .                               | 87 · 1 · 11   |
| 39 Յակոբեան Թագուր Փաշա (Դարուհի Յակոբեան)                   | 21596 · 1 · 9 |
| 40 Յակոբեան Տիկ. Երանուհի Թագուր Փաշա                        | 20000 · 0 · 0 |
| 41 Յակոբեան Երուանդ . . . . .                                | 1339 · 2 · 7  |
| 42 Յովհաննէսեան Փիքըր . . . . .                              | 527 · 9 · 4   |
| 43 Յովհաննէսեան Մկրտիչ . . . . .                             | 1793 · 6 · 8  |
| 44 Նարեան Նաշիտ . . . . .                                    | 648 · 2 · 4   |

|    |                                         |                           |                 |
|----|-----------------------------------------|---------------------------|-----------------|
| 45 | Ներկարարեան Յովհաննիկս . . . . .        | 4998 · 8 · 6              |                 |
| 46 | Նուպարեան Մնարոպ . . . . .              | 1 · 0 · 6                 |                 |
| 49 |                                         | Հիմն. Նուպարեան Սամերու   | 39534 · 0 · 4   |
| 48 |                                         | Համալս. Մրցանակ Երեւանի   | 2183 · 19 · 1   |
| 49 | Նուպար Պօղոս Փաշան                      | Մարի Նուպար Ակնարուժրան   | 16264 · 2 · 1   |
| 50 |                                         | Նուպարեան Մատենադարան     | 13930 · 11 · 10 |
| 51 |                                         | Նուպար. Վարժ. Հելիոփոլիսի | 4275 · 0 · 5    |
| 52 | Շերիտնեան Տիկ. Ագապի . . . . .          | 4538 · 12 · 9             |                 |
| 53 | Չամբերքէն Տիգրան . . . . .              | 15000 · 0 · 0             |                 |
| 54 | Պալեան Մկրտիչ . . . . .                 | 446 · 16 · 0              |                 |
| 55 | Պալըգնեան Բարսեղ . . . . .              | 6236 · 12 · 0             |                 |
| 56 | Պէրպէրեան Ալաբել . . . . .              | 240 · 14 · 10             |                 |
| 57 | Պէրպէրեան Սերովրէ . . . . .             | 20 · 10 · 0               |                 |
| 58 | Պօղոսեան Գրիգոր . . . . .               | 2374 · 17 · 0             |                 |
| 59 | Պօյանեան Գաբրիէլ . . . . .              | 379 · 9 · 8               |                 |
| 60 | Պօննութեան Յակոբ և Օհանիկ . . . . .     | 8510 · 17 · 7             |                 |
| 61 | Պօննութեան Օհանիկ . . . . .             | 503 · 14 · 6              |                 |
| 62 | Սամուկլեան Միքայէլ . . . . .            | 4806 · 6 · 8              |                 |
| 63 | Սարաֆեան Օննիկ . . . . .                | 97 · 12 · 8               |                 |
| 64 | Սարգիսեան Գէորգ և Տիկին . . . . .       | 2000 · 15 · 0             |                 |
| 65 | Սեւոեան Մարտիրոս . . . . .              | 360 · 9 · 6               |                 |
| 66 | Սէրեան Հերում . . . . .                 | 3399 · 1 · 9              |                 |
| 67 | Սէմերնեան Լեւոն . . . . .               | 2415 · 8 · 8              |                 |
| 68 | Սվանեան Սերովրէ . . . . .               | 25613 · 0 · 0             |                 |
| 69 | S. Լ. . . . .                           | 3800 · 7 · 8              |                 |
| 70 | Տատրեան Տոֆք. Տէօվլէք և Տիկին . . . . . | 1173 · 12 · 6             |                 |
| 71 | Տէր Զաքարեան Տիկ. Արուսեակ . . . . .    | 3083 · 15 · 3             |                 |

|                              |                    |                                                      |                            |
|------------------------------|--------------------|------------------------------------------------------|----------------------------|
| - 72                         | Փափազեան կարապետ   | .....                                                | 2028 · 8 · 4               |
| 73                           | Քարկոտորեան Ստեփան | .....                                                | 400 · 0 · 0                |
| 74                           | Քելէկեսոն Տիգրան   | Տեօրքեօլի Քելէկեսոն Որբան.<br>Դպրոցաէր Տիկնանց Վարժ. | 1 · 0 · 6<br>3595 · 10 · 1 |
| 75                           | Տիկին Ա. Ռ.        | .....                                                | 7000 · 0 · 0               |
| 76                           | Օրիորդ Մ. Պ.       | .....                                                | 1200 0 · 0                 |
| <b>Համագումար Աթգլ. ռոկի</b> |                    |                                                      | <b>309881 · 9 · 7</b>      |

**ՆԱՆ.**— Այս ցուցակը արտագրուած է 1938 տարեշրջանի տպագրուած Տեղեկագիրէն եւ Հաշուեկշխաէն (Ցուցակ Թիւ 8):

Թուրքիոյ մէջ գրաւուած կամ բանդուած կալուածներում անուանական արժէքը պահուած է Հաշուեկշխաէն դուրս պարտական հաշիւի մը մէջ, եւ վերոգրեալ ցուցակին մէջ նշանակուած է Ա. Ռոկի 1 · 0 · 6, յիշողութեան համար:

### Ա. Մ Փ Ռ Փ Ո Յ Թ

|                                |            |                 |
|--------------------------------|------------|-----------------|
| Ցուցակին համագումարը           | Աթգլ. ռոկի | 309881 · 9 · 7  |
| որուն վրայ պէտք է ամելցնել     | "          | "               |
| Հիմն. Դրամագլուխը              | "          | 75366 · 19 · 7  |
| ինչպէս նաեւ Սովոր. Դրամագլուխը | "          | "               |
| (Մելգոննեան Հիմնադրամ)         |            | 514109 · 9 · 6  |
| Դրամագլուխներու համագումարը    | Աթգլ. ռոկի | 899357 · 18 · 8 |
| (31 Դեկտ. 1938 ին)             |            |                 |

## ՅԱԻԵԼՈՒՄ

### ՄԱՍՆԱԿՈՐ ԴՐԱՄԱԳԼՈՒԽԻ


1939-1946 ին կայացած կանխորոշ յատկացումով նոր  
Հիմնադրամներ

|                                   |             |            |           |
|-----------------------------------|-------------|------------|-----------|
| 1. Մարկոսեան, Ռաֆայէլ Հիմնարկ.    | Բարիզ       | Տոլար      | 400260·00 |
| 2. Մելիքեան, Սարգիս               | Ատիս-Ապապա  | Անգլ. Ոս.  | 2000·00   |
| 3. Կրէտ, Պետրոս                   | Կալկարա     | Բուսփի     | 22875·00  |
| 4. Անդրանիկեան, Մկրտիչ            | Գահիրէ      | Եգ. Ոսկի   | 300·00    |
| 5. Մանիսալեան, Օր. Սօֆի և Զարուհի | Գահիրէ      | Եգ. Ոսկի   | 9000·00   |
| 6. Հեղիմեան, Կարապետ              | Աղեքսանդրիա | Եգ. Ոսկի   | 7250·00   |
| 7. Ալեքսանեան, Աղեքսանդր եւ Տիկին | Մարսէլ      | Զուից. Փր. | 20000·00  |
| 8. Վեմեան, Հայկ                   | Մարսէլ      | Զուից. Փր. | 22417·00  |
| 9. Ալեանաֆ, Մ.                    | Մանչէսթըր   | Անգլ. Ոս.  | 500·00    |
| 10. Մովսէսեան, Սերովը             | Նիւ Եռք     | Տոլար      | 16809·00  |
| 11. Քէօլէեան, Ստեփան              | Սփրինկֆիլտ  | Տոլար      | 10000·00  |
| 12. Ասլանեան, Մամուկ              | Նիւ Եռք     | Տոլար      | 7458·00   |
| 13. Սարաֆ, Յակոբ                  | Նիւ Եռք     | Տոլար      | 7459·00   |
| 14. Պօյանեան, Յակոբ               | Պուրոնի     | Տոլար      | 2569·00   |
| 15. Շարաֆեան, Արքիմ               | Նիւ Եռք     | Տոլար      | 1400·00   |
| 16. Յակոբեան, Ալպէրը              | Ֆրէզնօ      | Տոլար      | 1392·00   |
| 17. Հենինեան, Կիրակոս             | Ֆրէզնօ      | Տոլար      | 1200·00   |
| 18. Թաշնեան, Գէորգ                | Զըլսի       | Տոլար      | 1000·00   |

# ՆԻԽԹԵՐՈՒՑԱՆԿ

Էջ

|                                                      |    |
|------------------------------------------------------|----|
| Նախաբան                                              | 3  |
| Անմահութեան ձամբան                                   | 4  |
| Պատմական Ակնարկ Մը                                   | 8  |
| Կտակային Ռւշտ                                        | 10 |
| Երդմնագիր                                            | 11 |
| Օգտակար Խորհուրդներ                                  | 13 |
| Յուշարձան (Քերքուած)                                 | 15 |
| Անձեռնմխելիութիւն եւ Թրըսք                           | 16 |
| Քանի՞ Տեսակ կտակ եւ Նուիրատուութիւն Կ'ըլլայ          | 18 |
| Պայմանաւոր Նուիրատուութիւն ի Կենդանութեան            | 20 |
| Ի՞նչ Տեսակ կտուկ Ընելու է                            | 24 |
| Լսէ' (Քերքուած)                                      | 26 |
| Ամերիկեան կտակի Պայմանները                           | 27 |
| Ամերիկեան կտակագրի Նմոյշ Մը                          | 30 |
| Միութեան Պատուոյ Ռսկեմտանեամը                        | 32 |
| Կտակնիդ Ըրէֆ                                         | 33 |
| Ի Կենդանութեան Նուիրատուութեան Պայմանագրութեան Մասին | 35 |
| Պայմանագրութեան Նմոյշ Մը                             | 39 |
| Միութեան կտակային Արշիւը                             | 41 |
| Հիմնադրամներ Հայաստան Փռխադրուած                     | 42 |
| Ամերիկայի կտակադրամները                              | 44 |
| Մասնաւոր Հիմնադրամներու Ցուցակ                       | 45 |
| Մասնաւոր Դրամագլուխ                                  | 47 |
| Յաւելուած Մասնաւոր Դրամագլուխի                       | 50 |





ԳԱԱ Դիմեսարար Գիտ. Գրադ.



FL0533676

[604]

ЦЕНА

ԱԼԿ  
202

Հայոց  
Համաշխառ  
Ազգային  
Վարչութեան

ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

CENTRAL BOARD OF DIRECTORS

295 Fifth Avenue

New York 16, N. Y.